ՁԱՅՆԴԱՐՁԻ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՏԻՊԸ

Գերմանական լեզուներին բնորոշ հնչյունափոխական կարևոր երևույթներից է ձայնդարձը, որը շատ ավելի հին երևույթ է, քան մեկ այլ կարևոր հնչյունափոխական երևույթ՝ ումլաուտը կամ ձայնափոխությունը: Ձայնդարձն իրենից ներկայացնում է որոշակի ձայնավորների որակական կամ քանակական հերթագայություն իրար հետ կապված համագոյակից ձևերում, ինչպես օրինակ, գոյականի տարբեր հոլովներում, բայի ժամանակային ձևերի կազմության մեջ կամ էլ որևէ ընդհանուր արմատից ածանցված ձևերում: Ըստ ավանդական մոտեցման տարբերում են ձայնդարձի երկու հիմնական տեսակ՝ որակական և քանակական: Ձայնդարձը բնորոշ է եղել գրեթե բոլոր հին լեզուներին և համարվում է ընդհանուր հնդեվրոպական երևույթ, թեև այն վաղ հնդեվրոպական շրջանի համեմատությամբ առավել համակարգայնացված վիճակով հանդես է եկել սեմական լեզուներում:

Որպես ձևաբանական հիմնական արտահայտչամիջոց՝ ձայնդարձը պահպանվել և հետագա զարգացում է ապրել հատկապես գերմանական լեզուներում: Եվ հենց գերմանական լեզուների ուսումնասիրությունն էլ մեծապես նպաստել է ոչ միայն գերմանական այլ նաև ընդհանուր հնդեվրոպական ձայնդարձի համակարգի բացահայտմանն ու պարզաբանմանը: Բայց քանի որ գերմանական լեզուները ընդհանուր առմամբ ժառանգել են հնդեվրոպական ձայնդարձի հերթագայությունների շատ ձևեր, որոնք հետագայում տարբեր հնչյունական տեղաշարժերի արդյունքում զգալի փոփոխություններ են կրել, այնուամենայնիվ անհնար է գերմանական լեզուներում ձայնդարձի ուսումնասիրությունը տարանջատել ընդհանուր հնդեվրոպական և նույնիսկ նախահնդեվրոպական ձայնավորական համակարգի ու ձայնդարձի վերլուծությունից: Ի վերջո, ինչպես է. Պրոկոշն է նշում, ձայնդարձի՝ քանակով և բնույթով շատ տարբեր տիպերի կամ շարքերի (Գրիմը իր «Գերմաներենի քերականություն»-ում, սահմանել է բայերի 14 խոնարհման տիպ) համակարգայնացումը

հնարավոր է եղել միայն հնդեվրոպական ձայնավորական համակարգի վերականգնումից հետո:[1]

Տարբեր գիտական աշխատություններում ձայնդարձի երևույթը տարբեր կերպ է ներկայացվել և շատ հաճախ վիճահարույց մեկնաբանությունների է արժանացել: Գիտական գրականության մեջ շատ հաճախ արտահայտվել է այն տեսակետը, որ ձայնավորների որակական և քանակական հերթագայությունները հիմնականում շեշտի հետ կապված փոփոխությունների արդյունք են: Շեշտի երկու հիմնական տիպերի՝ ուժգնության կամ դինամիկ և երաժշտական կամ բարձրության շեշտերի տարբերակման հետ կապված՝ այն տեսակետն է տարածված, որ ուժգնության շեշտի ազդեցությամբ կատարվում է քանակական հերթագայությունը, երբ անշեշտ դիրքում ձայնավորները սղվում կամ կրճատվում են, իսկ շեշտված դիրքում, ընդհակառակը՝ երկարում: Որակական հերթագայությունը վերագրվում է երաժշտական շեշտի գործողությանը: Սակայն, ինչպես իրավացիորեն նշում է Յու. Գաբրիելյանը, շեշտի գործողությունը ձայնդարձի մակերեսային հատկանիշն է միայն, և պետք է պարզել նրա խորքային էությունը նույնպես:[2] Բացի այդ, արդեն իսկ նախահնդեվրոպական լեզվում ձայնդարձի զրո աստիճանը (Schwundstufe) միշտ չէ որ հանդես է եկել շեշտի կորստի հետ, իսկ անշեշտ վիճակում երբեմն հանդիպել է նաև ձայնդարձի լիաձայն աստիճանը:[3]

Ընդհանուր առմամբ, ձայնդարձի ուսումնասիրության և բացատրության հետ կապված երկու հիմնական մոտեցում է առանձնացվում՝ հնչյունաբանական և ձևաբանական: Որոշ գիտնականների կողմից (Բրուգման, Հիրտ, Բորգստրյոմ) ձայնդարձի երևույթը զուտ հնչյունաբանական տեսանկյունից է ներկայացվել, իսկ նրա առաջացումը կապվել է հնչյունական օրենքների ազդեցության հետ, թեև հնչյունաբանական մոտեցումը e/o հերթագայության առաջացման պատճառների բացատրության հարցում որոշակի դժվարություններ է հարուցում: Բացի այդ պատմականորեն վկայված հնդեվրոպական լեզուների գոյության շրջանում այդ հերթագայությունները դիրքային պայմա-

---

[1] Прокош Э., Сравнительная грамматика германских языков, 1954, с. 129
[2] Գաբրիելյան Յու., Հայերենը և նախահնդեվրոպական լեզուն, 2001, էջ 143.
[3] Meier-Brügger M., Indogermanische Sprachwissenschaft, 7. Auflage, 2000, S. 142.

նավորվածություն արդեն չեն ունեցել. և նրանց զարգացումը հիմնականում ձևաբանական գործընթաց է եղել. իսկ գործառության հիմնական բնորոշ կողմը եղել է ձևաբանական հակադրությունների արտահայտումը: Ամեն դեպքում, քանի դեռ ձայնավորների որակական ու քանակական հերթագայությունների առաջացման նախնական պատճառներն ու պայմանները լիովին մեկնաբանված չեն, դրանք համարվելու են սկզբնական հնչյունական փոփոխությունների արդյունք, որոնք լեզվի զարգացման որոշակի շրջանում դադարել են գիտակցվել որպես հնչյունական երևույթ:

Հիմնականում վերջին շրջանի աշխատություններում շեշտը դրվել է հատկապես այն ձևաբանական գործընթացների բացահայտման վրա, որոնցով պայմանավորված են եղել որակական և քանակական հերթագայությունները: Այս դեպքում նույնպես հաճախ չի հերքվում ձայնդարձի ձևաբանական և հնչյունաբանական կողմերի կապը, իսկ հնչյունաբանական գործընթացները դիտվում են որպես ձևաբանական հակադրությունների տարբեր տիպերի ստեղծման հնարավորություն կամ պայման: Այսինքն, քանի դեռ սպառիչ բացատրություն չի տրված ձայնդարձի հերթագայությունների առաջացման խնդրին, անհնար կլինի լիովին անտեսել վերջինիս հնչյունական հիմքը: Միևնույն ժամանակ, ըստ ձևաբանական մոտեցման, ձայնդարձի հերթագայությունների ուսումնասիրությունը պետք է հիմնված լինի հնդեվրոպական արմատների ու հիմքերի ուսումնասիրության վրա՝ ներկայացնելով դրանց տարբեր տիպերում ձայնդարձի աստիճանների դրսևորման օրինաչափությունները: Հնդեվրոպական հիմքերի տարբերակման դեպքում նույնպես տարբեր տեսակետներ կան. եթե Ֆ. դե Սոսյուրը (որի ուսումնասիրություններում առաջինն է ներկայացված եղել հնդեվրոպական արմատների տիպերի ուսումնասիրության վրա հիմնված մոտեցումը) հնդեվրոպական արմատի երեք տիպ է առանձնացնում՝ ըստ արմատի վերջավորության, ապա Հ. Հիրտը տարբերակում է տարբեր հիմքեր կամ «բազաներ»՝ ըստ դրանցում առկա ձայնավորի բնույթի:[4] Է. Պրոկոշը նույնպես, հենվելով Հ. Հիրտի հնդեվրոպական

[4] Гухман М. и другие, Сравнительная грамматика германских языков, 2. том, 1962, с. 227.

հիմքերի ուսումնքի վրա, տարբերակում է ծանր և թեթև հիմքեր կամ «բազաներ»՝ ըստ դրանց ձայնավորի երկարության կամ կարճության:[5]

Ընդհանրացնելով նշենք, որ եթե գերմանական լեզուներում ձայնդարձի ձևաբանական բնույթը անվիճելի է, ապա վաղ հնդեվրոպական և ընդհանուր հնդեվրոպական շրջանում ձայնդարձի կատարած դերի և գործառույթի վերաբերյալ տարաձայնություններ կան, և վիճելի է, թե արդյոք ձայնդարձը նախապես եղե՞լ է ձևաբանական երևույթ, թե ոչ:

Ըստ Յու. Գաբրիելյանի՝ հնդեվրոպական լեզուների համաժամանակյա կտրվածքում էլ ձայնդարձը եղել է ձևաբանական հակադրությունների կազմության միջոց:[6] Հնդեվրոպական հին լեզուներում սկզբնապես գոյականի տարբեր հոլովներում կամ որևէ մի ընդհանուր արմատից ածանցված ձևերում եղել են ձայնավորների որակական կամ քանակական հերթագայություններ, որոնց որոշ մասը դեռևս նախահնդեվրոպական շրջանից է գալիս:[7] Օրինակ, թեև դժվար է վերականգնել հնդեվրոպական լեզվում 100 թիվը նշանակող բառի առաջին վանկի ձայնավորը, բայց ավելի քան հավանական է, որ այդ բառի տարբեր հոլովական ձևերը սկզբնապես արտահայտվել են ձայնավորների հերթագայությամբ՝ *kmt-, *kemt-, *komt-.[8]

Ռ. Ե. Կելլերը նույնպես նշում է, որ հնդեվրոպական լեզվում, որն ունեցել է մեծ քանակությամբ գոյականական շարքեր, տարբերակիչ հիմնական առանձնահատկություններից մեկը եղել է ձայնդարձի հնարավոր կիրառությունը անվանական հարացույցներում:[9]

Ինչպես նշում է Յու. Գաբրիելյանը, դեռևս նախահնդեվրոպական կամ վաղ հնդեվրոպական շրջանում, երբ դեռ ձևավորված չեն եղել ածանցները, ենթադրվել է ձայնդարձի առկայությունը որպես՝ներքին թեքման միջոց՝ շեշտի և կրկնության կողքին: [10]

---

[5] Прокош Э., Сравнительная грамматика германских языков, с. 123.
[6] Գաբրիելյան Յու., Հայերենը և նախահնդեվրոպական լեզուն, էջ 142.
[7] Meier-Brügger M., Indogermanische Sprachwissenschaft. S. 35.
[8] Прокош Э., Сравнительная грамматика германских языков, с. 34.
[9] Keller R. E., Die deutsche Sprache, 2. Aufl, 1995, S. 90.
[10] Գաբրիելյան Յու., Հայերենը և նախահնդեվրոպական լեզուն, էջ 140.

Այս առումով թերևս ճիշտ չէ միանշանակ պնդել ձայնդարձի հերթագայությունների՝ միայն շեշտվածության հատկանիշի փոփոխմամբ պայմանավորված լինելու հանգամանքը այն նկատառումով, որ շեշտն ինքն էլ է ձևաբանական կառուցվածքների կազմության միջոց եղել: Հնդեվրոպական Perfekt-ը, որի հիման վրա զարգացել է գերմանական Präteritum-ը, բնորոշվել է եզակի և հոգնակի ձևերում ոչ միայն ձայնավորի փոփոխմամբ այլ նաև տարբեր շեշտադրմամբ՝ մի դեպքում արմատի, իսկ մյուս դեպքում վերջածանցի վրա:[11] Ձայնդարձի սկզբնական ձևաբանական գործառույթը հաստատվում է նաև որոշ լեզվաբանների կողմից ներկայացված հնդեվրոպական և սեմական լեզուներում վկայված ձայնդարձի հերթագայությունների զուգահեռությամբ, ընդ որում սեմական լեզուներում ձայնդարձը հանդես է եկել ավելի համակարգված գործառական նշանակությամբ: Ինչպես է. Պրոկոշն է նշում, սեմական լեզուներում արմատի a ձայնավորումը բնորոշ է եղել անցողական բայերին, մինչդեռ անանցողական բայերում հանդես են եկել առաջին և հետին շարքերի ձայնավորները, որոնց հերթագայությամբ ժամանակավոր վիճակ, հատկություն արտահայտող ձևերը առաջին շարքի ձայնավորներով հակադրվել են հետին շարքի ձայնավորներով կազմված մշտական, տևական վիճակ արտահայտող ձևերին, ինչպես օրինակ արաբ. hasuna «գեղեցիկ» (մշտական վիճակ), բայց sakira «հարբած» (տվյալ պահին):[12]

Հնդեվրոպական լեզվում նույնպես առաջին շարքի ձայնավորները հիմնականում հանդես են եկել ներկա ժամանակի ձևերում, իսկ հետին շարքի ձայնավորները՝ վիճակ ցույց տվող ձևերում, օրինակ բայերից ածանցված ձևերում: Այսպիսով և հնդեվրոպական և սեմական լեզուներում հնարավոր է եղել հերթագայությունների նույն տիպերի առկայությունը: Վերոհիշյալ հակադրություններում առաջին և հետին շարքերի ձայնավորների հերթագայությունը է. Պրոկոշը փորձում է բացատրել ձայնավորների հիմքում ընկած լարվածության հատկանիշի տարբեր դրսևորումներում: Նա կարծում է, որ առաջին շարքի ձայնավորները, որոնք բնութագրվում են լարվածության ավելի բարձր աստիճանով, հանդես են գալիս ներկայի ձևերում, քանի որ լարվածությունը և

---

[11] Keller R. E., Die deutsche Sprache, S. 95.
[12] Прокош Э., Сравнительная грамматика германских языков, с. 119.

ներկա ժամանակով տրված գործողությունը հետաքրքրություն են նշանակում կատարվածի նկատմամբ, իսկ վերացական անուններում կամ տևական վիճակ արտահայտող ձևերում հետաքրքրության նվազման զուգահեռ նվազում է նաև ձայնավորների լարվածությունը, և առաջ են գալիս թույլ լարված հետին շարքի ձայնավորները:[13] Իսկ Յու. Գաբրիելյանը լարվածության հատկանիշն է առաջնային համարում լեզվի թե տարաժամանակյա և թե համաժամանակյա փոփոխությունները՝ պարզելու համար, որի շնորհիվ հնարավոր է բացատրել նաև մյուս հատկանիշների էությունը: Նախահնդեվրոպական լեզվի արմատական կաղապարներում, որոնցում նախապես գիտակցվել է միայն բաղաձայն տարրը, լարվածության հատկանիշով է պայմանավորված եղել լարված բաղաձայններին ուղեկցող ոչ լարված կամ թույլ լարված ձայնավորների առկայությունը, որոնք հետագայում ձևաբանական ծանրաբեռնվածություն ստանալով և իմաստատար նշանակություն ձեռք բերելով, սկսել են ավելի ուժեղ գիտակցվել և տեղի է ունեցել լարվածության աճ: Արդյունքում փոխվել է դրանց լարվածության քանակական և որակական կողմերի փոխհարաբերությունը՝ առաջ բերելով համապատասխան հերթագայություններ: Այդ հերթագայությունների միջոցով էլ ձևաբանական հակադրություններ են արտահայտվել: Ասվածը ապացուցում է Յու. Գաբրիելյանի այն եզրակացությունը, որ նախահնդեվրոպական արմատում արդեն ձայնավոր տարրն իրականացրել է հենքային կամ բառափոխական գործառույթ[14], կամ այլ կերպ ասած ձայնդարձը եղել է ներքին թեքման միջոց: Իսկ ձայնդարձի առաջացման պատճառ է հանդիսացել լարվածության որակական կողմի փոփոխությունը որակական հերթագայության դեպքում և լարվածության քանակական կողմի փոփոխությունը՝ քանակական ձայնդարձի համար:

Ձայնդարձը միանշանակ ձևաբանական կիրառություն է ստացել արդեն ընդհանուր գերմանական շրջանում՝ արտահայտելով ձևաբանական հակադրությունների տարբեր բազմազան տիպեր: Այս պատճառով արդեն անտեսվել է նրա դիրքային պայմանավորվածությունը և նախնական հնչյունական կողմը, քանի

---

[13] Прокош Э., Сравнительная грамматика германских языков, с. 121.

[14] Գաբրիելյան Յու., Հայերենը և նախահնդեվրոպական լեզուն, էջ 108-109, 163.

որ այն անհրաժեշտ է եղել հիմնականում նոր իմաստներ արտահայտելու համար:

Հնչյունական մակարդակում նույնպես ձայնդարձի հնդեվրոպական համակարգը ենթարկվել է մի շարք փոփոխությունների՝ ձայնավորների և երկհնչյունների շրջանում: Այսպես օրինակ՝ նոր գերմաներենի binden/ band/ gebunden շարքը համապատասխանում է նախահնդեվրոպակաՎ *bhendh-, *bhondh-, *bhndh- շարքին:[15]

Գերմանական լեզուների կարճ ձայնավորների համակարգում o > a և e > i հնչյունափոխությունները չէին կարող չանդրադառնալ հերթագայությունների հնդեվրոպական համակարգի վրա: Գերմանական լեզուներում հերթագայությունների ամենատարածված և գործուն տիպը եղել է e/a հերթագայությունը, որը հնդեվրոպական e/o որակական հերթագայության հետագա զարգացումն է ներկայացնում: Զգալիորեն ավելի քիչ գործուն են եղել a/ē, a/ō քանակական և ձայնդարձի VII շարքը կազմող հերթագայությունները: Ի դեպ, Վ. Ժիրմունսկին a/ō հերթագայությունը գերմանական նորակազմություն է համարում:[16] Առանձին դեպքերում էլ, ինչպես ուժեղ բայերի համակարգում այնպես էլ ածանցյալ ձևերում հնարավոր է եղել նոր լրացուցիչ հերթագայությունների կիրառումը, օրինակ՝ բայերի հիմնական ձևերի առաջացման տարբեր եղանակների արդյունքում դրանցում ստեղծված տարբեր ձայնավորումների դեպքում երբեմն e/a հերթագայության փոխարեն այլ հերթագայություն է հանդես եկել, ինչպես՝ ū/a: գոթ. lūkan/ lauk ի տարբերություն սովորական biugan/ baug ձևի:[17]

Ինչպես վերևում նշվեց, ձայնդարձը գերմանական լեզուներում պատկանել է համեմատաբար գործուն քերականական երևույթների թվին: Նրա գործառական ակտիվությունը հիմնականում կապված է եղել ուժեղ բայերի շարքերի համակարգման հետ: Վ. Ժիրմունսկին գերմանական լեզուներում ձայնդարձի գործառական ակտիվությունն ապացուցող փաստ է համարում I – III շարքերին պատկանող բայերի մեծ թիվը և ձայնդարձի շարքերի հետագա զարգացումը գերմանական լեզուներում, ձայնդարձի հաճախակի կիրառու-

---

[15] Meier-Brügger M., Indogermanische Sprachwissenschaft, S. 139.
[16] Жирмунский В., Общее и германское языкознание, 1976, с. 326.
[17] Гухман М. и другие, Сравнительная грамматика германских языков, с. 246.

թյունը բառակազմական կառույցներում և հատկապես՝ բայից ածանցված անվանական ձևերում:[18]

Հին գերմաներենի ուժեղ բայերի համակարգում ձայնդարձի աստիճաններով արտահայտվել են հիմնականում հետևյալ հակադրությունները՝

e/a, e(a)/գրո հերթագայություններով հիմնականում եզակի թվի Präteritum-ը հակադրություն է կազմել հոգնակի թվի Präteritum-ի և Präsens-ի ձևերի հետ, ինչպես օրինակ՝ հվգ. gab – geban, half – helfan (Prät. Sing. – Präsens); հվգ. half – hulfum (Prät. Sing. – Prät. Pl.); Partizip II-Ա Präsens-ի հետ (բացի V շարքի բայերից), ինչպես՝ հվգ. giholfan – helfan; Partizip II-ը եզակի թվի Präteritum-ի հետ՝ հվգ. giholfan – half, gigeban - gab, իսկ հոգնակի թվի Präteritum-ի հետ միայն IV և V շարքերում՝ հվգ. ginoman – nāmum.

Համեմատաբար ավելի քիչ գործուն a/ō հերթագայությամբ արտահայտվել է Präteritum-ի, որպես միասնական համակարգի, ձայնավորման հակադրումը Präsens-ի և Partizip II-ի ձևերին, ընդ որում ā աստիճանը հանդես է գալիս Präsens-ի և Partizip II-ի ձևերում, իսկ ō աստիճանը բնորոշ է Präteritum-ին և եզակի և հոգնակի թվերում, ինչպես՝ հվգ. faran – fuor/fuorum (Präsens – Präteritum), հվգ. fuor/fuorum – gifaran (Präteritum – Partizip II).

Ժամանակակից գերմաներենում էլ ձայնդարձը պահպանել է իր ձևաբանական գործառույթը հատկապես ուժեղ բայերի համակարգում՝ հանդիսանալով վերջինների հիմնական առանձնահատկությունը՝ որպես ուժեղ բայի 3 հիմնական ձևերի և ժամանակաձևերի կազմության միջոց: Սակայն լեզվի զարգացման ընթացքում հնչյունական որոշ փոփոխությունների ազդեցությամբ փոխվել է նաև ձայնդարձի հերթագայություններով արտահայտվող ձևաբանական հակադրությունների կազմը: Որոշ հակադրությունների փոփոխման պատճառ է հանդիսացել, օրինակ, նոր գերմաներենում 16-ից 17-րդ դարերում գործող՝ Präteritum-ի եզակի և հոգնակի ձևերի նույնացման միտումը, որի արդյունքում վերացել է e(a)/գրո հերթագայությամբ արտահայտվող Präteritum-ի եզակի և հոգնակի ձևերի հակադրությունը, ըստ այդմ ժամանակակից գերմաներենում ունենք՝ half (Prät. Sing.) և halfen (Prät. Pl.) հվգ. hulfum-ի փոխարեն: Մասնակի փոփոխություն է կրել նաև նույն հերթագայությամբ արտահայտվող

[18] Жирмунский В., Общее и германское языкознание, с. 328.

Partizip II-ի և եզակի թվի Präteritum-ի հակադրությունը, որը պահպանվել է ուժեղ բայերի III շարքում, իսկ II շարքի I ենթախմբում այն վերացել է՝ հվգ. biogan – boug – bugum – gibogan, բայց նվգ. biegen – bog – gebogen, որտեղ I ենթախմբի եզակի Präteritum-ը նմանվել է նույն շարքի II ենթախմբի եզակի Präteritum-ին՝ նվգ. gießen – goss – gegossen. Սա նշանակում է, որ ցանկացած լեզվական երևույթի զարգացումն ու փոփոխությունը պայմանավորված են եղել տվյալ լեզվին տվյալ ժամանակաշրջանում բնորոշ միտումների գործողությամբ: Եվ այն, որ հնչյունական հերթագայություններն էլ՝ սկզբնապես ձևաբանական պայմանավորվածություն ունենալով, որոշ ժամանակ անց կարող են գիտակցվել որպես հնչյունական երևույթներ, իսկ հետո նորից ստանալ ձևաբանական կարևորություն, կրկին պայմանավորված է հնչյունական միտումների գործողությամբ, ընդ որում լեզվի զարգացման ընթացքում ցանկացած միտում կարող է որոշ շրջանում զարգանալ հակադարձ ուղղությամբ՝ արդյունքում փոխելով նաև հերթագայության բնույթը: Իսկ այդ միտումների էությունը պարզելու համար, ինչպես նշում է Յու. Գաբրիելյանը, նախ պետք է ուսումնասիրել դրանց արդյունքները:[19] Իսկ հնչյունական միտումների արդյունքները հանդիսանում են հնչյունական փոփոխությունները:

[19] Գաբրիելյան Յու., Հայերենը և նախահնդեվրոպական լեզուն, էջ 93.